Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի **N 2** միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի՝ կերպարվեստ առարկայի (2 դասաժամ) և տեխնոլոգիա առարկայի (4 դասաժամ՝ տղա, աղջիկ խմբերի համար) ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է(Ձև **1**),
2. Փաստաթուղթ(դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի **26**-րդ հոդվածի **1**-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն(Ձև **4**),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ **3x4** չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2022թ-ի հունվարի 5-ը ներառյալ, ամեն օր ժամը **10:00**-ից **15:00**-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. հունվարի 10-ին ժամը **13**^{00}-ին, Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի **N2** միջնակարգ դպրոցում , հասցե՝ Գեղարքունիքի մարզի գյուղ Գանձակ Հ. Ավետիսյան **1**:

Տեղեկությունների համար զանգահարել՝ **(096)526231** հեռախոսահամարով: